



ՀԱՅԿԱԿԱՆ ԻՈՒՀ ԼՈՒԺՈՂԿՈՄԱՏ



Գ. ԴԱՐՅԱՆ

# ԾԱՂԿՈՒՆԻՔ



Լ Ո Ւ Ս Շ Ո Ւ Տ

ՅԵՐԵՎԱՆ

1940

5 OCT 2011

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՍԼԱՄԻՍԴՈՂԱՐՄԱՏ

902.6

Դ-27

ԱԿ

Վ. ԴԱՐՅԱՆ

# ԾԱՂԿՈՒՆԻՒԹ

ՀԱՆՐԱՄԱՍՉԵԼԻ ԱԿՆԱՐԿ  
ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԼՈՒՀԱՐԱՏ  
ՏԵՐԵՎԱՆ

1940

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ ժողովուրդն իր բազմագարյան գոյության ընթացքում կերտել է զարգացած կուլտուրա, վորս, չնայած պատմական ժանր ճգնաժամերին, յերբ հաճախ այդ ժողովրդի կյանքը զբեթե մազից եր կախված լինում, հասել է մեզ վորակոս փառհեղ ժառանգություն։ Այդ կուլտուրական արժեքներն են՝ հին և միջնադարյան մատենագրությունը, ժողովրդական բանահյուսությունը, վորակող սքանչելի տեղ և բանում «Սասունցի Դավիթը», և վերջապես հոյակապ ճարտարապետությունն ու ձոխ մանրանը-կարչությունը։ Այդ կուլտուրական արժեքներն այսոր գրեթե համաշխարհային նշանակություն են վայելում գիտնականների, պատմագիտների, գրականագետների ու արվեստագետների կողմից։

Ավելի և մեծ ուշադրության են արժանացել հայ ժողովրդի հին կուլտուրայի մեջ հասած մնացորդները Խորհրդային Միության մեջ։ Այստեղ, շնորհիվ մարզկության հանձնարների՝ Լենինի ու Ստալինի վարած ճիշտ ու խելացի ազգային քաղաքականության, հայերն, ինչպես և միության մյուս բոլոր ժողովրդներն, այսոր կերտում են իրենց կուլտուրան՝ ձեռվ աղային, բովանդակությամբ սոցիալիստական։ Ահա անցյալի այդ կուլտուրան ուսումնասիրելով ու վերամշակելով, մենք յուրացնում ենք այդտեղից և շարունակում ենք զարգացնել այն արժեքները, վորոնք անհրաժեշտ են սոցիալիստական հասարակություն կառուցելու համար։ Միանգամայն տեղին և այդ առթիվ հիշել ընկ. Մոլոտովի խրատալի ու խոհուն խոսքերը, վորոնք նա արտասանել է կուսակցության 18-րդ համաշումարում և վորոնք պետք ե անգիր անեն մեր պատանիները։

«Պետք է, առանց ուժերը խնայելու, ուսումնասիրել կուլտուրական ժառանգությունը։ Պետք է գիտենալ այն լրջորեն ու խորապես։ Պետք է ոգտագործել այն ամենը, ինչ վոր տվել է կապիտալիզմին ու մարդկության նախընթաց պատմությունը և այն աղյուսներից, վորոնք ստեղծված են շատ դարերի բնիքում մարդկային ախտանիվ, կառուցել ժողովրդի կյանքի համար բնդարակ, հարմար, լույսավ ու արևով լի մի նոր շենք...»։



1156  
40

Ուստի հայ պատանիները, վորոնք այսոր խորհրդացին կառավարության ու խորհրդային հասարակության գուրգուրանքով և հոգատարությամբ շրջապատված, պասըաստվում են գիտակից ու անձնվեր խորհրդային քաղաքացիներ դառնալու, պետք և ճանաչեն իրենց հայրենիքը, պետք և ծանոթ լինեն հայ ժողովրդի պատմական անցյալին և այդ ժողովրդի թողած հարուստ կուլառութայի հետ:

Ահա այդ նպատակին և ծառայում ներկայումս հրատարակվող այս համառոտ ակնարկը Ծաղկունիքի սասին, զորք մի փոքրիկ գավառն և յեղել պատմական Հայաստանի, և այս ը խորհրդային Հայաստանում զարգացնում եր սոցիալիստական շինարարությունը: Այդ նույն նպատակով ծրագրվում ե հետզհետեւ լույս ընծայել մեր հայրենիքի նաև մասս աչքի բնկնող ու պատմական նշանակություն ունեցող վայրերի վերաբերյալ նկարագրական ակնարկներ, վորոնք, անշուշտ, կծառայւն մեր պատանիների ինքնակրթության գործին:

Գրոֆ. Խ. Ս.

## ՎԱՐԱՃՆՈՒՆԻՔ

### ՄԱՂԿՈՒՆՅԱՑ ԶՈՐ

Հրազդանի ձախ ափով մենք բարձրանում ենք դեպի ծաղկավետ բարձունքը: Դանդաղ զնում ենք Ծաղկունյաց լեռների գեղերով: Դիմացի հորիզոնը ծածկված և մշտական և դեպի յերկինքը ձգված լեռնագագաթներով:


Հայկական աշխարհի այս գեղեցիկ հանգույցում միմյանց են գգվում բազմաթիվ մեծ ու փոքր գագաթներ: Նրանք իրար հետ կապվում են բազմաթիվ կարկաչանոս գետակների ու վըտակների միջոցով, վորոնք հոսում են շրջակա լեռների խիստ կտրոված լանջերով:

Ծաղկունյաց ձարբ, կամ ինչպես այժմ են անվանում՝ Ծաղկաձորը, դարերի պատմություն ունի:

Բնությունն առատորեն իր բարիքներն և պարզել մեր ռքանչելի յերկորի այս գավառին:

Յերբ Ալիբեկի կատարից դիտում ենք Ծաղկունյաց բնության սքանչելիքը, հմայված նրա գյութական գեղեցկությամբ, այն ժամանակ հարկանալի յեղանում, թե ինչո՞ւ մեր նախնիները հեռավոր պատմական անցյալում, մոտ 21 դար՝ սրանից առաջ այս վայրը կոչել են Մաղկունի, իսկ լեռների շուրջ՝ պարի մեջ պարփակված կանաչավետ հովիտը՝ Ծաղկունյաց ձոր: Այդ ձորն այժմ կոչվում է Ծաղկաձոր կամ Դարաչիչագ (Դարաչիչագ բառը պարսկերեն նույնն և նշանակում—ծաղիկների ձոր):

Ինչպես պատմական Հայաստանի բոլոր ֆեոդալական բերդերը կառուցված են յեղել բարձր լեռների անմատչելի լանջերին, ինչպես Արագածի վրա կառուցված հին Ամբերդ ամրոցը, վորը խոշոր գեր և կատարել հայ ժողովրդի պատմության մեջ, ինչպես՝ Գառնիի Տրդատաբերդը, Գեղարդը և նման շատ շատերը,



Արագածի հարավայն լանջին, Արխաշեն և Ամբերդ ձորերի միացման բարձրագիր սարահարթի վրա կանգնած ե միջնադարյան ֆեոդալական աժ-

բոց—Ամբերդը:

Նկարում՝ պալատի ընդհանուր տեսքը հարավային կողմից:

այնպես ել Ծաղկունիքի ալո լեռների գոգում ապաստան և զտե ոտարերկրյա հարձակումների դեմ պատերազմող հայ ժողովուրդն ու զորավարները:

Այդ զորավարներից մեկն եր Վարաժը, վորը հայոց Արտաշես 1 թագավորի ժամանակ հոչակված ե յեղել, վորպես քաջ ու ուղամիկ մարդ:

Արտաշես 1 թագավորը, Արարատյան դաշտը կենտրոն դարձնելով, առաջին անգամ ստեղծում և հիմք ե դնում հայկական պետությանը: Նա բազմաթիվ պատերազմներ և մղում մեր յերկրի վրա հարձակվող արտաքին թշնամիների դեմ և ընդարձակում ե պետության սահմանները:


Արտաշեսն իր քաջություններով մեծ հմայք ու համբավ ե ձեռք բերում ժողովրդի մեջ, վորը հետագայում նրան դարձնում ե առասպելական հերոս: Այդ լինում ե II դարում մեր թվագրությունից առաջ:

Արտաշեսն իր նվաճած յերկրները բաժանում եր աչքի ընկնող քաջ մարդկանց: Այդ քաջ մարդկանցից եր նայե Վարաժ զորավարը: Ահա թե այդ մասին ինչ ե ասում հայ ժողովրդի պատմահայր Մօվեսն Խորենացին. «... Բայց Արտաշեսը յուր վորդուն Տիգրանին տալիս ե ոովորեցնելու Վարաժ անունով մի պատանու, Դատի վորդուն, վոր Գեղամի վորդու Գառնիկի սերունդիցն եր, վորովհետև այն պատանին վարպետ եր նետ ձգելու ճարտարության մեջ: Նորան արքունական վորտերի իշխան ե նշանակում և գյուղեր ե պարզեցում նրան Հրազդան գետի մոտ, նրա անունով նրա ազդը վարաժնունի ե Կոչվում...»:

Այսպես ուրեմն Արտաշես թագավորը 189 թվականին (մեր թվագրությունից առաջ) տիրում ե այս շրջանը և Վարաժ զորավարին ե պարզեցում ամբողջ գավառը նրա քաջության համար: Այն ժամանակ ել գավառը կոչվեց Վարաժնունիք, վորտեղ տեր ու տնորեն եր հանդիսանում Վարաժնունիք տոհմը: Այս տոհմը հետագայում հայ ժողովրդի պատմության նշանակոր դեպքերի առթիվ միշտ հիշատակվում ե:

Ահա այդ պատմական Վարաժնունիքն ե՝ հարուստ ծառ ու ծաղկունքով, գլուխան ու սառնորակ ջրերով, պարփակված լեռների շուրջպարի մեջ, վորի կենտրոնը յեղել ե Ծաղկունիքունիք, վորտեղ տեր ու տնորեն եր հանդիսանում Վարաժնունիք տոհմը:

Այդ գեղատեսիլ Ծաղկուն գյուղը կենտրոնն ե հան զիմացել Ծաղկունիքի կամ ինչպես հետագայում են անվանել Ծաղկունիք առորի—Ծաղկաձորի:



Պատմական Հրազդանի ժայռոտ ափին բարձրանում են Ծաղկունիքի հնագույն կենտրոնի՝ Բջնիի այժմ ավերակ բերդի պարիսպները:


## ԾԱՂԿՈՒՆԻՔԸ ՅԵՎ ՊԱՀԼԱՎՈՒՆԻՔ

Ծաղկունիքը մեծ հոչակ եւ ստանում, բարդավաճում և պատմական խոշոր դեալքերի ասպարեզ եւ դասնում X—XII դարերում։ Այդ լինում եւ այն ժամանակաշրջանում, յերբ Ծաղկունիքը վարաժնունյաց տոհմից հետո դառնում եւ Պահլավունի իշխանների կալվածքը և վորը կառավարում եր Պահլավունի վասակի վորդի Գրիգոր Մագիստրոսը։

Ահա թե ինչու Ծաղկունյաց գավառի համարյա բոլոր նշանագոր հուշարձանները վերաբերում են X-ից մինչև XII դարերին։

Բջնիի հայտնի ամրոցը կառուցվել եւ XI դարում և յեղել է Պահլավունիների վոստանը։

Պահլավունիների տոհմը հայ ժողովրդի պատմության մեջ ասպարեզ եւ իջնում X դարում։ Այդ այն ժամանակ եր, յերբ Բագրատունյաց թագավորությունը Հովհաննես-Սմբատ թագավորի մահով՝ (1041թ) սուր ձգնաժամ եր ապրում, վորովհետեւ Անիի թագավորական գահի շուրջը մեծ տարածայնություններ եյին ծագել հայ իշխանների մեջ։ Յերբ Բագրատունիների թագավորությունը վերջացել եր, վերջին Հովհաննես-Սմբատ թագրատունուց հետո նոր թագավորություն հիմնելու դժվարին գործը վիճակված եր իրագործելու Պահլավունի տոհմին։ Յեկ ահա Վահրամ Պահլավունին, Գրիգոր Մագիստրոսի հորեղբայրը, իր ծերության հասակում, 1041 թվին, հայ իշխաններից մեկի՝ Վեստ-Մարգարի դավադրության գեմ յերկիրը պաշտպանեց և հալոց գահի վրա նստեցրեց որինակոր թագաժառանդ Փագիկ թագավորին։ Վահրամ Պահլավունին մեծ հայրենասեր եր և ականավոր զորավար։ Նա չորս անգամ դեռ շպրտեց Բյուզանդական զորքերն Անի քաղաքի պարիսպների տակից, վորոնք Բագրատունյաց թագավոր Հովհաննես-Սմբատի «կտակի» համաձայն, վոր նա իրո արել եր իր մահից առաջ, պահանջում եյին իրենց հանձնել Անին։



Գահլավունիների վոստան Բջնիի հայտնի բերդի ընդհանուր տեսքը (XIX դար):

Վերջին անգամ Վահրամը, հակառակ իր ծերության, 1047 թվին զենք առավ Անին պաշտպանելու և ընկավ պատրազմի դաշտում իր վորդի Գրիգորի հնտ միասին։ Հոր և վորդու մարմինը թաղփեց Մարմաշենի վանքում։ Վահրամը և ընդհանրապես Պահլավունիները վառ հայրենասերներ եյին, վորոնք ամեն պատեհ ժամանակ զենքը ձեռներին իրենց հայրենիքը հերոսաբար պաշտպանում եյին բոլոր տեսակի ստար հափշտակիչներից ու կեղեքիչներից։ Այդ մասին և վկայում նաև հետեւյալ արձանագրությունը։

«Մեր ամբողջ տոհմով և տնով հավատարիմ ենք մեր տեսրերին և զոհվելով Հայաստանի համար, մեր արյունով և մեր ունեցվածքով ու առատ գանձերով և բոլոր միջացներով ձգտում եյինք մեր յերկրի խաղաղությանը» (Դ.Ալիշան—Շիրակ, եջ 148):

Այս և մյուս բոլոր արձանագրությունները գրված են գրաբար լեզվով։ Այն ժամանակ հայոց գրական լեզուն, վորն ընդհանրապես գործածվում եր հայոց թագավորական արքունիքում և իշխանական դղյակներում, հանդիսանում եր գրաբարը։ Գրաբարն իշխալ և մեր գրականության մեջ մինչև XIX դարի կեսերը, մինչև Խաչատուր Աբովյանը։

Այդ ոլատնառով ել մեր հան բոլոր հիշատակարնները յեղել են գրված գրաբար լեզվով։ Սակայն ժողովուրդը, հեռու շինելով գրից և գրականությունից, միշտ խոսել եր բարբառային լեզուներով։

Այսպես ուրիշն՝ Մարմաշենի յեղեցու պատի վրա գրված այդ գրաբար արձանագրությունը վկայում է Պահլավունիների հայրենասիրության մասին։

Ծաղկունյաց գավառի հայտնի գործիչ՝ պայծառ հայրենասեր Գրիգոր Մագիստրոսն իր մանկությունն անց ե կացրել հենց իր այս հորեղբայր Վահրամի մոտ, վորը հայ պատմագիր Արքատակետ Լատտիկերտցու մոտ հիշատակվում ե, վորպես «հղոր և անվանի մարդ» բարեպաշտությամբ շատ բարձր, վորին չեր հատնում վոչ մի ուրիշ Պահլավունի»։

Ահա այդ մհծ հայրենասեր Վահրամ Պահլավունու հակողության և խամքի տակ մեծացավ Գրիգոր Մագիստրոսը, XI դարի ականավոր գիտնականը, խոշոր լեզվաբանը, փիլիսոփան և բժիշկը, վորը հայտնի գարձավ նաև վորպես հմուտ զինվորական և քաղաքական—պետական գործիչ։



Բջնին և բերդի տեսաբանը Հբագդանի ձորի կողմից:

Միջնադարյան ֆեռղալական Հայաստանում այն ժամանակ մեծ ծավալ եր ստանում գիրն ու զբականությունը, բոլոր վանքերին կից հիմնվում եյին դպրոցներ, տարածվում եր լուսավորությունը:

Վարպես կուլտուրական և շինարար մարդ, Գրիգոր Մագիստրոսը 1013 թվին կառուցեց Ծաղկունիքում Բջնիի հայոնի «Ս. Աստվածածին» վանքը, այնուհետև կառուցեց նաև Ծաղկունիքի Կեչառույցք գյուղի կամ ինչպես սովորաբար անվանում են, Կեչառիսի յեկեղեցին, վուի արձանագրությունը զրել տվեց 1051 թվին. Անա այդ վանքին կից Գրիգոր Մագիստրոսը հիմնեց նաև ճեմարան, վորտեղ կրթություն և դաստիարակություն ևր տալիս բազմաթիվ հայ պատանիների: Այսպիսով Ծաղկունիքում սկսում և ծավալվել Գրիգոր Մագիստրոսի ճեմարանական գործունեցությունը: Հետազայում նա նման ճեմարաններ և հիմնում նաև Սանահինում և «Ս. Կարապետ» վանքում, սակայն նրա մշտական բնակվայրը մնում է Ծաղկունյաց գավառը: Բայց Մագիստրոսին վիճակված չեր մշտապես զբաղվելու գրական-ճեմարանական հանգիստ ու շինարար աշխատանքով:

Վրա են հասնում ահավոր ժամանակները: Նա առաջին անգամ մասնացեց իր հորեղբայր Վահրամի հետ Գագիկ Բայ գահակալական կոթողերին և պայքարեց Վեստ-Մարզոսի վոտնակությունների դեմ: Ապա, 1042—43 թ.թ., յերբ թուրք-սելջուկների հրոսակախմբերը վողողեցին Հայաստանը, հասնելով մինչև Ծաղկունյաց գեղեցիկ յերկիրը, Գրիգոր Մագիստրոսն ել, վորպես մեծ հայրենասեր, վայր զրեց իր գոհին, թողեց ճեմարանական խաղաղ կյանքը և ազատատենչ ժողովրդի հետ միասին կովեց թուրք-սելջուկների դեմ Հրազդանի ափերին և Բջնիի ամրոցի մոտ վահնչացրեց նրանց:


1043 թվականին Մագիստրոսը վերագառնում է Արեւելք, Բյուզանդական բանակի հետ միասին շարունակելու կոիվը սելջուկների դեմ: Այդ ժամանակից սկսած նա Բյուզանդիայի արևելյան նահանգների կառավարիչ և կարգվում, վորտեղ հատկապես Տարոնի «Ս. Կարապետ» վանքում շարունակում է իր ճեմարանական գործը և մեռնում է 1058 թվին իր այդ պաշտօնում:

Յեկայապես՝ Ծաղկունիքից հեռանում և Գրիգոր Մագիստրոսը, գալիք սերունդների համար թողնելով անցյալ դարե-

ըի խոշոր ճարտարապետական հուշարձանները՝ Բջնիի և Կեչառիսի պատմական վանքերը:

Մինչև վերջին տարիները Կեչառիսի դիմացի հրապարակի վրա կանգուն մնացել եր Գրիգոր Մագիստրոսի քարակերտ ամբիոնը, վորտեղից մեծ փիլիսոփան արտասանում եր իր ճառերը։ Այդ ամբիոնն այժմ քանդված է։

Մաղկունիքի անցյալ գրական նշանավոր դեմքերից են նաև Խաչատուր Կեչառեցին, վորը հայտնի յե XIII դարի վերջերում։ Ինչպես Գրիգոր Մագիստրոսը, նա նույնպես հոգևորական չեր։ Պատմաբանների վկայությամբ Կեչառեցին հայտնի յեր, վորպես իր ժամանակի հայ մտավորականներից՝ «աշխարհիկ յերեց»։



Բջնիի բերդի պարիսպները, վորի տակ 1043 թվին Վասակ Պահլավունուք վորդի Գրիգոր Մագիստրոսն իր զորքով բանակ եր գրել և, պատերազմելով թուրք-սելջուկական հրոսակախմբերի դեմ, հաղթել եր նրանց, վոչնչացրել և քշել իր հայրենի հողից։

Նկարում՝ բերդի պարիսպներն արեւլյան կողմից։

ՈՏԱՐԵՐԿՐՅԱ ՆՎԱԶՈՂՆԵՐԻ ԱՐՃԱՎԱՆՔՆԵՐԸ

Հին Արևելքի վար գուսող տիրակալն, առհս, վոր իր բոնակալական կրնկի տակ չի տրորել Հայաստանի բարդավաճ դաշտերն ու ծաղկավետ լեռները:


Х զարի վերջերին, թյուրք-մոնղոլական կիսավայրենի դել-  
մուկ ցեղի հրասակախմբերը առպատակեցին Ծաղկունիքի դաշ-  
տերն ու ձորերը, մաս ու սարսափ տարածելով ամենուրեք:  
Այդ ժամանակ, Բջնիի տերը Վասակ Պահլավունին եր, քաջա-  
մարտիկ սպարապետը և Գրիգոր Մագիստրոսի հայրը, վոր  
խիզախությամբ նրանց դեմ յելավ: Նա, համախմբելով իր շուր-  
ջը Ծաղկունիքի ազատաներ ժողովրդին, սոսկալի ջարդ տվեց  
ավազակ դեմուկներին և դուրս քշեց հայրենի յերկրից:

Սյս ճակատամարտից հետ յերբ Վասակ Պահլավունին  
հանգստանում եր Սերկեիլ լեռան կանչաշպիտ լանջին, քնի մեջ  
դավաճանորեն սպանվում ե գարւանակալած թշնամու կողմից:

Գրիգոր Մագիստրոսի մահից հետո մոտ մեկ դար ծաղկունիքի ժողովուրդը անքում եր սելջուկ-թյուրքերի ծանր լծի տակ:

Վրա և հասնում XII դարը: Իվանե և Զաքարի յեղբայրները, վորոնք հայ իշխաններ եյին և վորպես սպարապետներ, ծառայում եյին վրացական զորքի մեջ, հարձակվում են սելչուկների վրա և Հայաստանի մեծ մասը, ինչպես նաև Բջնին իր շրջակայրով ազատում են բռնակալների ճաշումից:

Զաքարեն և Խվանեն ազատագրում են նաև «Երախի» յերկիրը և Արագածի հարավային լանջին ամբացնում են Ամբերդ գղյակը, իսկ արևմտյան լանջին, վորպես իրենց հաղթանակի կոթող, կառուցում են Հառիջի վանքը (Ղփչաղ գյուղում), վորի արևելյան պատի վրա քանդակել են տալիս իրենց բարելյեֆ նկարը:



Զաքարե և Իվանե յեղայրնեի պատկերը Հառիջում—Ղիշաղ գյուղում:



**Այդ՝ հվանեյի և Զաքարեյի տոհմից ե նաև աթարակ Զազան, վորը XIV դարում ազատագրում ե Ծաղկունիքը—մոնղոլներից: Բջնի գյուղի յեկեղեցու պատի վրայի մի արձանագրության մեջ այսպես ե գրված այդ մասին:**

1358 թվին Զաքարի և Իվանի յեղբայրների տոհմից արարակ Շահինշահի վորդի արարակ Զազան պատերազմում ե Մելիք Աշրաֆի հետ, վոր «Բջնի քաղաքը Խլել եր, քաղաքը հիմանց ավերել, շատ անվանի մարդիկ սրի քաշել, յեկեղեցիները տապալել», և յետ ե խլում Բջնին, ժողովրդին հարկից ու ծառայությունից ազատ ե կացուցում և նորոգում յեկեղեցին:

**Ահա դարձյալ XIV դարը: Բռնակալ մոնղոլական ցեղերը դաժան լենկթեմուրի առաջնորդությամբ մահ ու ավեր են սփռում հայոց յերկրում: Նրանք ավերում են Բջնու գոյակը և արյունով ներկում Հուրաստանի—Հրազդանի ջրերը:**

**Ահա XVII դարը: Ծաղկունիքի զովաշունչ լեռների ստորոտաները ծածկում են Ջելալեղինի հրոսակների սպիտակ վրանաներով: Նրանք սով ու ավերածություն են տարածում առաստ ու բարգավաճ յերկրում: Ինչպես պատմում ե հայ մատենագիր Առաքել Դավրիթեցին, սոսկալի սովի պատճառով մի քանի կանայք մարդիկ ենին դավում, սպանում և յեփում ուտում:**

**Այսպես եր Ծաղկունիքի հեռավոր պատմական անցյալը: Ոտարերկրյա մեկ արյունարբու բոնակալին փոխարիւնում եր մյուսը: Սակայն՝ աշխատավոր, քրտնաջան ժողովրդի հռոգում միշտ անմար եր մնում պայքարի տեսչանքը հանուն իր ազատության, հավատն ու հույսը՝ հանուն իր ապագայի, հանուն գալիք ազատ ու արմաշող որերի:**

**Ճշմարիտ ե ասված, վոր «Հայաստանի ժողովուրդը հասակն առել և անըիկ մարտերում: Հեքյարային ֆենիքսի նման նա վերածնել է մոխրից, վորը թվում եր՝ սպանում եր վոչնչացնել նրա գոյուրյան հետերն անգամ: Վորպես ավերակ ընկեռում եյին եին տաճարներն ու պալատները, ամբողջ աշխարհովը մեկ ցրվում եր քաղաքների ու գյուղերի բնակչությունը, հայրենի յերկրում լուս եր հայ լեզուն...Սակայն նորից ու նորից վերածնվում եր եին կուլտուրան, անասելի բովչանելով շնում հայկական բանա-**

լստեղծությունն ու յերաժշտությունը, նոր յերանգներով փայլունիարշությունը և անդուլ աշխատում եյին իմաստուն գիտմականները, վերականգնելով կորցրածը, հավաքելով ժողովրդի պատմության ցավ ու ցրիկ յեղած քերպերն ու եզերը...»:\*)

**Այսպես եր նաև Ծաղկունիքում:**

\*) «Պրապեա»:

## ՄԱՂԿՈՒՆԻՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ծաղկունիքը, վորպես մեր հնագալյան կուլտուրայի արժեհարաբոր վայրերից մեկը, մեր պատմանի զավառագետների ուսումնասիրության հետաքրքիր առարկա յի հանդիսանում:


Ծաղկունիքի անտառապատ լեռների չքնաղ լանջերին ու կանաչապատ ստորոտներին, լեռնադաշտերի վրա և կարկաչուն գետերով ու սառնորակ աղբյուրներով հարուստ հովիտների վայրերում մենք հանդիպում ենք անցյալ հին գարերի կուլտուրայի բազմաթիվ հուշարձանների, վորոնց նշանակությունն անչափ մեծ և մեր յերկրի կուլտուրայի և հայ ժողովրդի անցյալի պատմության ուսումնասիրության համար: Պատմական Ծաղկունյաց ձորը, պատմական հուշարձանների մի սքանչելի գանձարան եւ:

Ալիբեկ անտառապատ լեռան հարավային ստորոտին, մի թեք հարթության վրա բարձրանում եւ Ծաղկաձորը: Յերեք կողմից ծածկված անտառապատ լեռներով, գիմացը բացվում եւ կանաչապարդ հովիտը, վորտեղից վոլորապառոյտ հոսում եւ Հրազդանը՝ Զանգուռն: Ծաղկաձորի վերին մասում եւ գտնվում կեչառիսի հոչակավոր վանքը, նրա հյուսիսային կողմում տարածվում եւ մի ձոր, փոքրիկ առվակով, վորի յեղբից անմիջապես սկսվում եւ Ալիբեկ անտառապատ լեռը:

Կեչառիսի վանքը բաղկացած եւ չորս յեկեղեցիներից, վորոնք տեղավորված են անտառապատ լեռների գոգավորության մեջ:

Յեկեղեցիներից յերեքը խմբված են մի տեղ, իսկ մեկը գտնվում եւ մոտ 70 մետր գեղի արևելք: Հարթության հյուսիսային մասում տեղավորված եւ ամենամեծ յեկեղեցին, վորը Գրիգոր Մագիստրոսի կառուցածն եւ 1033 թվին և կոչվում եւ «Սուրբ Գրիգոր», հարավային կողմում գտնվում են «Սուրբ Նշան» և «Սուրբ Կաթողիկե» յեկեղեցիները:

Կեչառիսի յերեք յեկեղեցիների ընդհանուր տեսարանը:



Կեչառիսի վանքերի բակում գտնվող պատմական խաչքարերը:

Գեղեցիկ խաչքարեր և հասարակ տապանաքարեր շրջապատում են այս յերեք յեկեղեցիները:

Հիմնապատերից յերեսում ե, վոր այս յեկեղեցիները շրջափակված են յեղել պարոպով:

«Սուրբ Նշան» կոչված յեկեղեցին («Ս. Գրիգորի» հարավային կողմի փոքրիկ յեկեղեցին) չի պահել իր հիմնադրի անունը և հիմնադրության տարին, միայն դուռն վրայի արձանագրությունը վկայում ե, վոր 1223 թվին «Աստվածառեր Պատրոն Վաչեն նորոգյաց վերստին զեկեղեցիս...»<sup>1)</sup>:

Յերրորդ «Ս Կաթողիկե» յեկեղեցին XIII դարի առաջին քառորդում կառուցել ե Պոոշ իշխանի հայր Խաղբակա վորդի Վասակը. այդ իմանում ենք արևմտյան դուռն վերև գտնված արձանագլությունից:

Չորրորդ՝ «Սուրբ Հարություն» կոչված յեկեղեցին կառուցվել ե 1220 թվին, «առ ի յիշատակ համորեն ննջեցելոց ի քրիստոո...»<sup>2)</sup>). այս շինարարության մասին վկայող արձանագրությունը չի հիշատակում հիմնադրին, այլ միայն տալիս ե նրա ծնողների, Հասանի և Ռուղուքանի անունները:

Այս հրաշակերտ վանքը պատմական խոշոր արժեք ներկայացնող հուշարձան է: Պատմական աղբյուրներից լերեզում ե, վոր այս մենաստանում Պահլավունիների դամբարանն ե յեղել:

Մյուս պատմական հուշարձանը Մաքրավանքն ե, վորը դտնվում ե համանուն գյուղում, Ծաղկաձորից 4 կիլոմետր հեռու: Այս վանքի մասին պատմական վոչ մի տեղեկություն չկա: Նրա կառուցումը պետք ե վերագրել XIII դարին:


Թաքյալու գյուղի մոտ, մի կիլոմետր դեպի արեմուտք, Միօխանա գետի ափին կիսավեր պատերով բարձրանում ե Արտավազի վանքը:

Վանքի պատերի արձանագրություններում հիշվում ե XIII դարը, սակայն վանքը կառուցված ե յեղել ավելի առաջ, մոտ IX դարում:

Գյումուշ, հնում Կարենիս, գյուղի ձորակի մեջ բարձրա-

1) Աշխարհաբար թարգմանությունը կլինի.  
«Աստվածաներ պարոն Վաչեն դարձյալ նորոգեց այս յեկեղեցին».

2) Աշխարհաբար կլինի.  
«Վորպես հիշատակ բոլոր մահացածներին».



Մաքրավանք գյուղում և գտնվում ճարտարապետական տեսակետից շատ կարեր Մաքրավանք հուշարձանը, վորի կառուցումը վերաբերվում է XIII դարին: Նկարում՝ Մաքրավանքը հարավային կողմից:

Առում ե Կարենավանքը: Վանքի գավթի պատի արձանագրությունը գրված է 1576 թվականին, իսկ վանքի կառուցման առուղյական տարեթիվը հայտնի չեն: Արդական, հնումը Արտադավան գյուղից մեկ ու կեռ կիլոմետր հեռու արևմտյան կողմում, յերկու ձորակներով մեկուսացած, անտառապատ բլրի վրա գտնվում է «Նեղուցի սուրբ աստվածածին» կոչվող վանքը, շրջապատված ավերակ տների հիմնապատերով և խաչքարերով: Տաճարի դուռն վրայի արձանագրությունը գրված է 1271 թվականին. պետք ե յենթադրել, վոր վանքի կառուցումն ել վերաբերում ե այդ ժամանակներին:

Բչնի գյուղումն ե գտնվում «սուրբ աստվածածին» յեկեղեցին: Սա բարձրանում ե Հրազդան գետի աջ ափին, լեռնալանջին, վորի հարավարևելյան կողմում գտնվում և Բջնիի հին ամրոցը: Հարավարևելյան կողմում և Հրազդանի սքանչելի հովիտը: Վանքը պարսպապատ և և 4 աշտարակներով պաշտպանված: Խնչպես վերը հիշեցինք, «ս. աստվածածին» յեկեղեցին կառուցել ե Գրիգոր Սագիստրոսը, 1031 թվին:

Զամանգյուղ և Պետրոսի բլուրների ստորոտում, մի փոքրիկ հովիտի մեջ տեղափուլված և վերին Սիստա գյուղը, վորտեղ մինչեւ որո մնում են յերկու յեկեղեցիների հիմնապատեր, բաւականին խաչքարեր և աների հմքեր: Եերեսում ե, վոր այսուղեղ հնում բավականին մեծ բնակություն ե յեղել: Ավանդությունն ել ավելացնում ե, վոր այս վայրը պատկանել և Պառշիշանին: Այսուղեղ ե նաև Զամանգյուղ հին գյուղատեղին:

Ալեքսեկ լեռան Թիք-Թափա գաղաթի հարավային կողմում, մի ձորակի մեջ, Հրազդանի ձախ ափին, գետեղված և Քաղաքի կամ Քաղցի գյուղը. այսուղեղ համարի յե «Աղղիքիր» գյուղատեղին, ուր զեռնա մնում են մի քանի խաչքարեր և մի յեկեղեցու հիմնապատեր:

Հրազդանի ձախ ափի մի տափարակում փուլած և Սոլակ գյուղը: Այսուղեղ գետի անմիջական ափին նկատելի յեն հին տների ավերակներ, իսկ հանդեպ լեռան գոգավորության մեջ բարձրանում և Մայրավանքը, վորը ամենահինն ե այս շրջանում և կառուցել ե Յոհան Փիլիսոփան 636 թվին և վորը Յեղիկաթողիկոսը կոչել ե Մայրագոմ:

Պատմական հուշարձաններ կան նաև Ծաղկունիքի ամենահին գյուղում՝ Քարվանսարայում—Աթարբեկյանում, վորը

փոված և Սուղայան լեռան սատրոտում, մի գեղեցիկ հարթության վրա\*):

Այսպիսով մհնք՝ զգուշությամբ որբում ենք հին տապանաքարերի վրայի փոշին՝, անցյալ պատմության յուրաքանչյուր քարն ուսումնասիրելով, ծանոթանում ենք մեր նախնիքների պատմությանը, հին ճարտարապետության խոշոր արժեք ներկայացնող կոթողներին Ծաղկունյաց գեղեցիկ յերկրում:

Իսկ այդ հուշարձանների թիվը չի սահմանափակվում մեր թվածով: Նրանք ավելին են:

Ծաղկունիքի յուրաքանչյուր գյուղ, բլրակ, ժայռ, չքաղզանի գեղեցիկ հովիտը, մինչեւ կապուտակ Սևանի ափերը, հարուստ են բազմաթիվ պատմական հուշարձաններով:



Յերանոսի արևելյան կողմում այժմ քանդված յեկեղեցու պատերի մացորդներից, մոտավորապես, IV—V դարերի:

\* ) Տես մանրամասն՝ Յեւ Լալայան—Նշանավոր վանքեր, «Ազգագրական հանդես» XXII և XXIII դիրք, էջ 101—102—125—140:



Կեչառիսի պատմական հուշարձանների ընդհանուր տեսքը և նրա հարավային կողմում ընկած խաչքարերից մեկը:

## ԾԱՂԿՈՒՆԻՔԻ ԼԵՌՆԵՐԸ

Ծաղկունիքի շրջակայքի լեռները, գեղեցիկ պարեզոտիկագմելով, տարածվում են բոլոր ուղղություններով:

Ծաղկունյաց լեռնաշղթայից գեղի հյուսիս և արևելք բարձրանում են Փամբակի, Միսխանայի և Մեյզանի լեռները, վորոնք, ձգվելով գեղի արևմուտք, Ապարանի բարձրավանդակով միանում են Խորհրդային Հայաստանի կենտրոնում իր լայն վեշելը չորս կողմ տարածած Արագածի հետ:

Լեռների ծաղկալեռ հովիտներով հոսում են բազմաթիվ գետեր ու գետակներ, վորոնց կապույտ, զուլալ ջրերում խլաւով լողում են կարմրախայտ և այլ տեսակի անուշահամ ձկներ:

Սկիզբ առնելով կապուտակ Սեվանից, Ծաղկաձորի միջով հոսում ե պատմական Հրազդան գետը (Զանդուն), ապա Մարմարագետը կամ Միսխանան: Հրազդանի աջ ափի յերկարությամբ տարածվում են բարձր լեռներ և բազմաթիվ լեռնաժմբեր:

Ծաղկունիքը հարուստ և բազմաթիվ և բազմատեսակ լեռնային տեսակներով և այլ ոգտակար հանքերով: Ծաղկաձորից գեղի հյուսիս, Միսխանա Դարա կոչված հովտում մի ժամանակ գործում եյին պղնձահանքեր և արդյունահանվում եր պղինձ: Այժմ այդ հանքերը չեն շահագործվում:

Ծաղկունյաց լեռները հարուստ են պեմզայի կամ, ինչպես տեղացիներն են անվանում, չեչաքարի հսկայական զանգվածներով:

Արգական գուղի և Մարմարագետի վերին ավազանի մոտ են գտնվում Հայաստանի հայտնի մարմարի հանքերը, վորի մարմարն այսոր զարդարում ե կարմիր Մոսկվայի Մետրոն և մեր Ժողովրդի սեղանի զարդն և կազմում:

Նաև վիմագրական քարի հսկայական պաշարներ կան


Ծաղկունյաց լեռներում, Բջնի և Աղփարա գյուղերի մոտ:  
Աղվերանի բարձրունք ներում կան արծաթի, կապարի ու  
ցինկի հանքահետքեր:

Աղփարայի և Արզականի մերձակայքում տարածված և  
սրաքարը:

Արզականի և Բջնիի շրջակայքում կա նաև կվարց և հրա-  
ճեստ կավի Կրաքարի զանգվածներ կան Ծաղկաձոր—Մաքրա-  
վանք տարածության վրա:

Բազմազան են Ծաղկունիքի բնական հարստությունները,  
վորոնք կարոտ են յերկրաբանական լուրջ ուսումնագիրու-  
թյան:

---



Կեչառիսի վանքերի լարեւյան կողմում գտնվող ավերգած յեկեղեցու  
(Վ դար.) հաբակային ճակատը—մուտքը:

## ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԾԱՂՈՒՆԻՔԸ


Յերկար տարիներ հայկական վեռնաշխարհի այս ծաղկավետ մասը գտնվում էր Պարսկական տիրապետության տակ:

1827 թվի Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Մաղկունիքն անցնում է Ռուս ցարական տիրապետության տակ:

Յերեանում նստած ցարական չինովնիկները, տեսնելով Մաղկաձորի հրաշալի բնության սքանչելի հատկությունները, այն գարճնում են իրենց ամառանոց: 1835 թվից սկսում են այստեղ կառուցել ամառանոցային շենքեր բարձրառատիճան չինովնիկների ու ցարական սատրապների համար, վորոնք Յերեւանի տոթակեղ ամիսներն անց են կացնում այստեղ: Հետեղ՝ զականորեն վարելով գաղութացման քաղաքականություն նորանվաճ յերկրում, ոռոսական ցարիզմն, ինչպես բռլոր մյուս մարդերում, այնպես ել այստեղ, Ռուսաստանի խորքերից գաղթեցնում և ոռու դյուզացիներին: Այսպիսով նախկին կեչառիս գյուղի ավերակ յերեղմանոցի տեղում հիմնվում ե կոնստանտինովկա ոռոսական գյուղը, վորոն այժմ ընդհանուր անունով նույն պես կոչվում ե Մաղկաձոր:

Անցյալի մոայլ ու խափար կոնստանտինովկան այժմ ապրում ե ուրախ, յերջանիկ նոր կյանքով: Ամեն տարի, յերբ բացվում են գարնանային պայծառ որերը և Մաղկունյաց լեռներն ազատվում են ձմռան կազանքներից, յերբ թավշյա կանաչով են ծածկվում նրա լանջերը և գույնզգույն ծաղիկների հոտ ու բուրմունքով և լցվում շրջակայքը, պիոներական յերջանիկ սերնդի լիաթոք յերզով ու կանչով և թնդում հինավորց Մաղկունիքը:

Ստալինյան յերջանիկ դարի պիոներական ամսուային-



...Յերբ թավշյա կանաչով են ծածկվում Ալիբեկի լանջերը, պիոներական յերջանիկ սերնդի յերզով ու կանչով և թնդում հինավորց Մաղկունիքը:

ձամբարների վրաններով և զարդարվում Ծաղկունյաց ձորը։  
Չկա այլս հին Կոնստանտինովկան, ուր ամառ անոց եյին  
գալիս պապղուն ուսադիրներով իշխանավորներ և հղփացած  
հարուստներ, վորտեղ ամառները՝ «Նահանգապետի տան առջև,  
որամեջ նվազում եր զինվորական նվազախումբը» և «Դարաչի-  
չագի աղբյուրներից հայտնի կաթնազբյուրն ու քրուտ դրաւրն ան-  
ընդհատ հյուրներում եյին ամառանոց յեկած զվարճաներ-  
խմբերին»։

Այժմ մեր մեծ յերկրի աշխատավորներն ամեն ամառ բազ-  
մաթիվ խմբերով շտապում են դեպի Ծաղկաձոր իրենց հան-  
դիստն այնտեղ անցկացնելու։

Այստեղ, զովաշունչ ոգում և կանաչավետ լանջերում են  
իրենց հանգիստն անցկացնում ամառները նաև «Մարդկային  
հոգու ճարտարապետները», — Հայաստանի խորհրդային գրողնե-  
րը, նրանց համար հատուկ կառուցված, լայն հարմա ըություն-  
ներ ունեցող հանգստյան տներում։

Ամեն մի խորհրդային քաղաքացի, յերբ լինում և մեր  
յերկրի այս գեղեցիկ անկյունում, նրա միտքը մի պահ հետ ե-  
թոշում դեպի անցյալ տարիները և կարիք և զգում հարց ու  
փորձ անել Ծաղկունիքի մոտիկ և հեռու անցյալի մասին։

Ցեվ այն ժամանակ, թեկուզ համառատակի, զուք տեղեկա-  
նում եք Ծաղկունիքի այն մոռայլ խավարով պատած անցյալի-  
մասին, վոր տամնյակ տարիներ ճակատագրի նման անբաժա-  
նելի և յեղել հայ գյուղից։

1920 թիվ...

Ահա ճառագայթեց խորհրդային բորբ արևը Ծաղկունի քի բու-  
րավետ լեռներում։

Կյանքի կենարար զարկերակն սկսեց ավելի ու ժգին իտիել։  
Ստեղծագործական նոր թափ ու յեռանդ ստացավ Ծաղ-  
կունիքի աշխատասեր ժողովուրդը։

Գյուղի կենտրոնում բարձրացող կեղեքման և շահագործման-  
խորհրդանիշը, յեկեղեցին, դարձավ պատմական հուշարձան, իր-  
տեղը զիջելով կոլխոզային ակումբին։

Զքացավ անհետ կալվածատերերի և չարչիների շահագոր-  
ծումն ու ձնշումը։

Չկա այլս հին գյուղը։ Նա անդարձ անցել և պատմու-  
թյան գիրկը։ Այժմ նոր գյուղը բռնել և սոցիալիզմի հաստա-  
տուն ուղին։

Ամենուրեք ծաղկում, ամրապնդվում են կոլեկտիվ տնտե-  
սությունները։ Կոլտնտեսային գյուղն ստեղծել և ունեմոր-  
ու յերջանիկ կյանք։ Գյուղում առաջ և յեկել նոր ինտելիգեն-  
ցիա։

Տարեց-տարի բաղմապատկվում և սոցիալիստական գյու-  
ղատնտեսության առաջավորների թիվը։ Մարմարագետի գեղատե-  
սիլ գետահովտի ամենավերին մասում և գտնվում կարմիր Հով-  
տի կոլեկտիվ տնտեսությունը, վորն ունի լավ կազմակերպված  
անառնապահական տնտեսություն և պանրագործարան։

Մրանից մի քիչ մոտ, Մարմարագետի լեռնահովտում ու-  
շագրության և արժանի թայշարուի գյուղը, վորտեղ գտնվում  
և մեղքաբուծական խորհրդային տնտեսությունը։ Թայշարու-  
խում և գտնվում նաև խոշոր պանրագործարան։

Այս շրջանում իր քաղցրահամ աղբյուրներով ու ընտիր-  
ցորենների մշակությամբ հայտնի և Ալավարս գյուղը։ Ուշա-  
գըրության և արժանի նաև Ռնդամալը, Հրազդանի և Մարմարա-  
գետի խառնարանի մոտ, ձախ ափին։ Սա անառնապահությամբ  
պարզացած գյուղերից եւ։

Այսուհետեւ պետք է իշել Աթարբեկյանը (Քարվանսարան),  
և ուրիշ մի շարք գյուղեր։

Այսպես, փակվում են մեր առաջ անցյալ պատմության մուայը  
եղերը, և այժմ տեսնում ենք մեր շուրջը փոփած նոր կառուցվող,  
համայնական, ծաղկափթթիթ ու փառափոր կյանքով ապրող նոր  
ավաններն ու գյուղերը։ Մեր գիմաց փայլում և այսոր Ծաղկունյաց-  
ձորի պայծառ, սոցիալիստական ներկան, իսկ հեռվում գծա-  
գրվում և լուսավոր, յերջանիկ ապագան—կոմունիստական հա-  
սարակության Ծաղկունիքը։

Ծաղկունիքի մարդը հիմա ինչպես մեր համայն յերկրե-  
րոլոր մարդիկ, խորհրդային հպարտ քաղաքացին, կանգ-  
նած բնության բազմերանդ հարստություններով զարդարված  
բարձրություններից մեկի վրա և դիտելով մոտ ու հեռու լեռ-

Դաշոթաներն ու լայնածավալ դաշտերում փռված մեր գյուղերը՝  
ըստ՝ չի կարող զապել յերջանկության զգացմունքներով և հայ-  
ցենասիրությամբ լցված իր սիրաը և ուզում ե կանչել, կտնչել  
նորից ու նորից.

«Կյանքը լավ է դարձել, ընկերներ.  
Կյանքը ուրախ է դարձել, ընկերներ»:



Պատ. Խմբագիր՝ պլող. Խ. Սամուելյան  
Տէխ. Խմբագիր և որբագրիչ՝ Վ. Պողոսյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Վարաժնունիք—Ծաղկունյաց ձոր . . . . .	5
2. Ծաղկունիքը և Պահլավունիք . . . . .	9
3. Ոտարերկրյա նվաճողների արշավանքները . . . . .	16
4. Ծաղկունիքի պատմական հուշարձանները . . . . .	21
5. Ծաղկունիքի լեռները . . . . .	29
6. Սոցիալիստական Ծաղկունիքը . . . . .	32

Պատվեր № 852  
Տիրած 1500  
Դրամիակ լիազոր՝ Բ-1015

Հայաստակի Ազգային գրադարան



NL0429333

18929